

Կրթահամալիրի հանրակրթական դպրոցների նախակրթարանների սաների և երկարօրյա ուսուցման սովորողների մենյուների (սննդակազմ) կազմման և հրապարակման կարգը

1. Մենյուները միասնական են կրթահամալիրի բոլոր հանրակրթական դպրոցների սովորողների և սաների համար:
2. Մենյուները կազմում է այդ նպատակով ձևավորված աշխատանքային խումբը, տասը ուսումնական օրվա (երկու շաբաթվա) համար: Հաջորդ տասն օրվա համար այն կարող է կրկնվել:
3. Աշխատանքային խմբի կազմը.
  - կրթահամալիրի մասնագետ (խմբի ղեկավար)
  - կրտսեր դպրոցի ծնող
  - նախադպրոցական կամ երկարօրյա խմբի դաստիարակ
  - կրտսեր դպրոցի խոհարար
  - կրտսեր դպրոց-պարտեզի ղեկավար
4. Խմբի կազմը փոխվում է յուրաքանչյուր ամիս, բացառությամբ խմբի ղեկավարի, ներգրավելով կրթահամալիրի Դպրոց-պարտեզի, Հիմնական դպրոցի, Նոր դպրոցի, Գեղարվեստի կրտսեր դպրոցի, Քոլեջի ներկայացուցիչներին:
5. Յուրաքանչյուր ամսվա համար կրթահամալիրի տնօրենը խմբի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է խմբի անհատական կազմը աշխատանքը սկսելուց առնվազն 3 օր առաջ:
6. Մենյուն կազմվում է գնումներով որոշված տեսականուց՝ նախատեսելով՝
  - նախակրթարանի 1 սանի համար օրական 470 դրամ (երեք անգամյա սնունդ)
  - երկարօրյա ուսուցման 1 սովորողի համար օրական 275 դրամ (երկու անգամյա սնունդ):
7. Մենյուն հաստատվում է խմբի անդամների համաձայնությամբ: Դրա անհնարինության դեպքում հաստատում է խմբի ղեկավարը՝ արձանագրության մեջ նշելով խմբի անդամների վերապահումները, դրանց մասին իր կարծիքը:
8. Մենյուն գործածության մեջ դրվելուց 10 օր առաջ ներկայացվում է կրթահամալիրի հաշվապահին համաձայնության: Հաշվապահը կրթահամալիրի տնօրենի գրասենյակի միջոցով 3 օրվա ընթացքում դպրոցներին է ուղարկում մենյուները՝ իր ուղղումներով և սննդամթերքի՝

յուրաքանչյուր տեսակից մեկ երեխայի համար շաբաթական պահանջարկի հաշվարկով:

9. Համաձայնեցված մենյուն գործածման օրից առնվազն մեկ օր առաջ հրապարակվում է նշված դպրոցների ենթակայքերում: